26.04.23 - 27.04.23
09:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի (ՀՀԻ) Ցեղասպանությունների և այլ զանգվածային հանցագործությունների կանխարգելման ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնը հայտարարում է «Ցեղասպանություններ. պատմություն և արդիականություն» խորագրով գիտաժողով սկսնակ հետազոտողների համար: Գիտաժողովը տեղի կունենա **ս.թ. ապրիլի 26-27-ը ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում**:

Գիտաժողովին մասնակցելու հնարավորություն ունեն Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, ինչպես նաև արտասահմանյան բուհերի ուսանողներ, մագիստրանտներ և ասպիրանտներ, ինչպես նաև երիտասարդ գիտնականներ:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, անգլերենը և ռուսերենը: Օտարերկրյա մասնակիցները գիտաժողովին կմիանան հեռավար կարգով:

Համաժողովի համար ընդունվում են հոդվածների հայտեր (մինչև 300 բառ) հետևյալ թեմաներով (հարակից թեմաները նույնպես կարող են ներառվել).

● «Ցեղասպանությունները ժամանակակից աշխարհում»,

● «Ցեղասպանությունների պատճառները և հետևանքները»,

● «Ցեղասպանությունների ոճրագործները և նրանց պատժի իրավական և քաղաքական մեխանիզմները»,

● «Ցեղասպանությունների ճանաչման և դատապարտման խնդիրը ժամանակակից աշխարհում»,

● «Ցեղասպանությունների ուսումնասիրման աղբյուրները»,

● «Վերապրողների հուշերը և ցեղասպանության հիշողությունը»,

● «Ժամանակակից տեխնոլոգիաները և ցեղասպանությունները»,

- «Մշակութային ցեղասպանություն»,
- «Արցախի հիմնահարցը և ցեղասպանական վտանգը»:

Գիտաժողովին զեկուցումով հանդես գալու համար անհրաժեշտ է դիմել **մինչև ս.թ. ապրիլի 6-ը:**

Հայտում պետք է նշել մասնակցի անունը, ազգանունը, բուհը, զեկուցման վերնագիրը և համառոտ նկարագրությունը (մինչև 300 բառ) և ուղարկել ysu.genocide.studies@gmail.com էլհասցեին:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am